ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 264-Ա
« 24 » ՍԵՊՏԵՄԲԵՐ 2025Թ
ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» 2060-Ն որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ապարատի պահպանման համար 2025 թվականի պետական բյուջեով նախատեսված «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով առկա ֆինանսական միջոցներից 2025 թվականի սեպտեմբերի 26-ին Երևան քաղաքում կայանալիք մարզային ամենամասշտաբային «Ճանաչի՛ր Հայաստանը» խորագիրը կրող ներքին զբոսաշրջային ցուցահանդեսին Վայոց ձորի մարզը պատշաճ ներկայացնելու նպատակով Վայոց ձորի մարզը ներկայացնող պատվիրակությանը տրամադրել 180000 (մեկ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ դրամական աջակցություն: Պատվիրակության ղեկավար՝ Արամ Կոստանյան:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով կատարել գումարի վճարում:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ.ՄԻՔԱԵԼՅԱՆ

Ք.Եղեգնաձոր